1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրում Վարդան Սաշայի Խաչատրյանին /ծնված՝ 15.03.1984թ./ սեփականության իրավունքով պատկանող՝ 0,2307 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի (սեփ. վկայական N 27012025-04-0031, ծածկագիր՝ 04-088-0136-0011) նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել որպես՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Փոփոխված 0,2307 հա հողամասն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
3.Առաջարկել Վարդան Սաշայի Խաչատրյանին՝ համայնքի բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքների նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը, որը կազմում է 794000 (յոթ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Սաշայի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2459-Ա

ՄԱՆՎԵԼ ՌԱԶՄԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Մանվել Ռազմիկի Առաքելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 12-16/1 խանութ հասցեում գտնվող՝ Մանվել Ռազմիկի Առաքելյանին /ծնված՝ 07.01.1969թ./ սեփականության իրավունքով պատկանող՝ 04-003-0037-0064 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում 2011 թվականին ինքնակամ կառուցված 20,3 քմ արտաքին մակերեսով խանութը և ինքնակամ բացված թվով 1 /մեկ/ պատուհանը՝ համաձայն «Ռաֆայել Մարգարյան Նորայրի» ԱՁ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքի՝ ծածկագիր 2026ZPEQHC:

2. Խանութ՝ 20,3 x 0,1673 x 20000 = 67920 /վաթսունյոթ հազար ինը հարյուր քսան/ ՀՀ դրամ,

Ինքնակամ բացված թվով 1/մեկ/ պատուհան՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ:

1) Վճարման ենթակա գումարը կազմում է 77920 /յոթանասունյոթ հազար ինը հարյուր քսան/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Մեծամորի համայնքապետարանի 900335003407 հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մանվել Ռազմիկի Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2460-Ա

0,02531 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշմամբ հաստատված N 2 Հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Նաիրա Խորենի Սիմիկյանի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը,ինչպես նաև Մեծամոր համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 09-ի N 187-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրում գտնվող՝ Վարանցով Տիգրանի Սիմիկյանին /ծնված 15.03.1974թ./ և Նաիրա Խորենի Սիմիկյանին /ծնված 02.10.1974թ./ ընհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Եղեգնուտ բնակավայրի 9-րդ փողոց, 94 բնակելի տուն հասցեում գտնվող՝ 0,02351 հա /կադաստրային ծածկագիր 04-039-0139-0029/ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասի հողատեսքը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի 9-րդ փողոց, 94 բնակելի տուն հասցեում գտնվող՝ Վարանցով Տիգրանի Սիմիկյանին /ծնված 15.03.1974թ./ և Նաիրա Խորենի Սիմիկյանին /ծնված 02.10.1974թ./ ընհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,02351 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիր 04-039-0139-0029) սխալմամբ կադաստրային քարտեզում փոխանցվել և հաշվառվել է որպես Մեծամոր համայնքի սեփականություն, սակայն այդ հողամասի

նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերում հաստատող փաստաթղթեր և հողամասը հանդիսանում է որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս՝ Վարանցով Տիգրանի Սիմիկյանին /ծնված 15.03.1974թ./ և Նաիրա Խորենի Սիմիկյանին /ծնված 02.10.1974թ./ ընհանուր համատեղ սեփականություն:

3.Փոփոխված 0,02351 հա հողամասն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրա Խորենի Սիմիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2461-Ա

0,08715 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 24-ի N 1/փ-437 եզրակացությունը, Արտակ Օնիկի Վերդյանի դիմումը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 09-ի N 185-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքում գտնվող՝ Արտակ Օնիկի Վերդյանին /ծնված՝ 29.05.1984թ./ սեփականության իրավունքով պատկանող 0,08715 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի /սեփ.վկայական 26052026-04-0098 կադ. ծածկագիր՝ 04-003-0101-0177/ նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Առաջարկել Արտակ Օնիկի Վերդյանին՝ համայնքի բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքների նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը, որը կազմում է 2516000 (երկու միլիոն հինգ հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ:
3. Փոփոխված 0,08715 հա հողամասն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Օնիկի Վերդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2462-Ա

0,05733 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N828-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով և հիմք ընդունելով Անուշ Ռուբենի Հակոբյանի դիմումը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 09-ի N181-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 4-րդ թաղամաս, 4/45 հողամաս հասցեում գտնվող՝ Անուշ Ռուբենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,05733 հա /կադաստրային ծածկագիր 04-003-0056-0050/ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասի հողատեսքը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2.Փոփոխված 0,05733 հա հողամասն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անուշ Ռուբենի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2463-Ա

0,044 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N828-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով և հիմք ընդունելով Մարիամ Ջանիբեկի Պողոսյանի, Հրանտ Արտյոմի Մկրտչյանի և Քրիստինե Արտյոմի Մկրտչյանի համատեղ դիմումը, ինչպես նաև Մեծամոր համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 09-ի N 180-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արտաշար բնակավայրի 2-րդ փողոց, 5 հասցեում գտնվող՝ Մարիամ Ջանիբեկի Պողոսյանին, Հրանտ Արտյոմի Մկրտչյանին և Քրիստինե Արտյոմի Մկրտչյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ 0,044 հա /կադաստրային ծածկագիր 04-024-0014-0001/ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողատեսքը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2.Փոփոխված 0,044 հա հողամասն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Ջանիբեկի Պողոսյանին, Հրանտ Արտյոմի Մկրտչյանին և Քրիստինե Արտյոմի Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2464-Ա

«ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրություն.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, գյուղատնտեսության և բնապահպանության, քաղաքաշինության և հողաշինության բաժինների աշխատակիցների 2026 թվականի ապրիլի 17-ին կազմված արձանագրության համաձայն ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների կողմից կատարված շրջայցի ժամանակ 2026 թվականի հոկտեմբերի 01-իննույն օրը Մեծամոր համայնքի Արևիկ բնակավայրում արձանագրվել է, որ «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությանը վարձակալությամբ տրամադրված 04-027-0119-0024 կադաստրային ծածկագրով հողամասն օգտագործվում էր ոչ նպատակային, իրականացվում էր ավազակոպճային խարնուրդի արդյունահանում և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ կառույց էր տեղադրված՝ ավազի լվացման սարքավորում: մասնավորապես իրականացվում էր ավազակոպճային խարնուրդի արդյունահանման աշխատանք և ինքնակամ տեղադրված սարքավորումներով իրականացվում էր ավազի լվացման աշխատանք, ինչի հետ կապված համապատասխան ցուցում է տրվել դադարեցնելու նշված աշխատանքները:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից՝ 2026 թվականի հոկտեմբերի 05-ին կայացվել է թիվ 2303-Ա որոշումը՝ «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության

արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների կողմից կատարված շրջայցի ժամանակ 2026 թվականի հոկտեմբերի 01-իննույն օրը Մեծամոր համայնքի Արևիկ բնակավայրում արձանագրվել է, որ «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությանը վարձակալությամբ տրամադրված 04-027-0119-0024 կադաստրային ծածկագրով հողամասն օգտագործվում էր ոչ նպատակային, իրականացվում էր ավազակոպճային խարնուրդի արդյունահանում և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ կառույց էր տեղադրված՝ ավազի լվացման սարքավորում, որը«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 3–րդ պարբերությամբ և 154–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված արարքներ են,մասնավորապես իրականացվում էր ավազակոպճային խարնուրդի արդյունահանման աշխատանք և ինքնակամ տեղադրված սարքավորումներով իրականացվում էր ավազի լվացման աշխատանք, ինչի հետ կապված համապատասխան ցուցում է տրվել դադարեցնելու նշված աշխատանքները: Հողամասը, որի վրա կատարվում էին նշված աշխատանքները, ուներ ջրային նպատակային և գործառնական նշանակություն և այն ոչ նպատակային էր օգտագործվում: Նշված դեպքով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1–ին մասի «բ» կետի հիմքով Մեծամորի համայնքապետարանի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 05–ինհարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակում 2026 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 11:30–ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով «Հայփոստ» ՓԲ ընկերության միջոցով պատշաճ ծանուցվել է «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությունն՝ ի դեմս տնօրեն Արամայիս Լեոնիդի Մուքայելյանի /ստացական՝ LO135831783AM/, սակայն փոստային անդորրագրի հետադարձ ծանուցումը հանձնաժողովը չէր ստացել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Ելնելով անհրաժեշտությունից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը՝ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է երկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովը գործի քննության նոր օր է նշանակել 2026 թվականի հոկտեմբերի 21–ին ժամը 12:00–ին, որի վերաբերյ ալ «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությունը կրկին ծանուցվել է /ստացական՝ LO135937302AM/: Միաժամանակ նշված ծանուցումը տեղադրվել է

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) և ծանուցումը համարվում է հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

Փաստորեն «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Արամայիս Լեոնիդի Մուքայելյանի, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթով գործի քննության օրվա, տեղի և ժամի մասին, չի ներկայացել 2026թվականի հոկտեմբերի 21-ին ժամը 12:00-ին կայանալիք գործի քննությանը:

Բացի այդ հստակ պարզ է, որ «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությունը նախկինում՝ 2026 թվականի ապրիլի 09-ին, Մեծամոր համայնքի ղեկավարի թիվ 940-Ա որոշմամբ արդեն իսկ ենթարկվել էր վարչական տույժի ՎԻՎՕ 154-րդ հոդվածի 4-րդ մասով, սակայն տույժից հետո մեկ տարվա ընթացքում դարձյալ շարունակել է իրավախախտումը, ինչը վկայում է դիտավորության մասին, և արարքում հնարավոր է առկա են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ:

Սակայն, «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերության կողմից, Մեծամոր համայնքի ղեկավարի թիվ 940-Ա որոշումը սահմանված կարգով բողոքարկվել է և ներկայումս գտնվում է ՀՀ վարչական դատարանի վարույթում (դատական գործ թիվ ՎԴ/8463/05/26):

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, սույն օրենքով սահմանված կարգով, իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը, բացառությամբ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող իրավահարաբերություններից բխող, այդ թվում՝ օտարվող կամ օտարված գույքի կամ դրա նկատմամբ ձեռքբերողի սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ վարչական ակտերի վերաբերյալ քննվող գործերի.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 30/26 վարչական վարույթը կսեցնել՝ մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/8463/05/26 վարչական գործով վերջնական դատական ակտի կայացումն ու դրա օրինական ուժի մեջ մտնելը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սահմանված կարգով կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և 71-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2465-Ա

ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի փոփոխված գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Օրենքով սահմանված կարգով ապահովել գնումների պլանի հրապարակայնությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 2466-Ա

ԵՐԵՄ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումներով, նկատի ունենալով,որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Երեմ Վահագնի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բերքաշատ բնակավայրի 9-րդ փողոց, 8 բնակելի տուն հասցեում գտնվող՝ Երեմ Վահագնի Հարությունյանին /ծնված՝ 28.10.1967թ. սեփականության իրավունքով պատկանող՝ 04-032-0016-0006 կադաստրային ծածկագրով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում 1990 թվականին ինքնակամ կառուցված 7,7 քմ մակերեսով ծածկը,՝ համաձայն «ԳԵՈՍԱՅՔ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքի / ծածկագիր՝ 2026WYZJ3C/:

2. Ծածկ՝ 7,7 x 0,0743 x 10000 = 5720 /հինգ հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ,

1) Վճարման ենթակա գումարը կազմում է 5720 /հինգ հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Մեծամորի համայնքապետարանի 900335003407 հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. 2022 թվականին ինքնակամ կառուցված 64,4 քմ արտաքին մակերեսով կցակառույցը և 1990 թվականին ինքնակամ կառուցված 2,8 քմ արտաքին մակերեսով լողավազանը համարել որպես ինքնակամ կառուցված շինություններ:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երեմ Վահագնի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2467-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԱՆ ՅՈՒՐԻԿԻ ՆԱԴՈՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,12-րդ հոդված 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 16-ի N254 որոշման N3 հավելվածը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի Տանձուտ գյուղի բնակիչ Արման Յուրիկի Նադոյանին տրամադրել դրամական պարգևատրում 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով՝ 2026 թվականի հոկտեմբեր ամսին Երևան քաղաքում կայացած Մուայ Թայի Եվրոպայի գավաթի 18-րդ բաց առաջնությանը երկրորդ տեղը զբաղեցնելու համար:

2.Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում և գումարը փոխանցել 2480600327160000 հաշվեհամարին (գումարը ստացողը՝ հայրը՝ Նադոյան Յուրիկ Քյարամի, հանրային ծառայության համարանիշ՝ 2802840053):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2468-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՄԵԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Վոլոդյայի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում գտնվող Արթուր Վոլոդյայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերին /ծածկագիր՝ 04192YY8PJ9Z կադ. ծածկագրեր՝ 04-067-0132-0006 և 04-067-0132-0013/ տրամադրել միասնական հասցե՝ Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայր, 12-րդ փողոց, 57 խանութ:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Վոլոդյայի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2469-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՆԻԿՈԼԱՅ ՍԵՄՅՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Նիկոլայ Սեմյոնի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրում Նիկոլայ Սեմյոնի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 041822QXRG6J, կադ. ծածկագիր՝ 04-063-0011-0015/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Մարգարա, 14-րդ փողոց, 28 հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նիկոլայ Սեմյոնի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2470-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 1381-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 29-ի «Ջանֆիդա բնակավայրի բնակիչ Ալիկ Սաբրիի Ալոյանին դատարանի վճռով պատկանող նախկին կոլտնտեսության պահեստի և անասնաշենքի զբաղեցրած 0,16306 հա հողամասի նկատմամբ գույքային իրավունքը վերականգնելու և Մեծամոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 29-ի N 0164-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1381-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) Որոշման 2-րդ կետում «2002» թվերը փոխարինել «2012» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2471-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ԱՊԵՏԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Ապետի Միքայելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրում Անահիտ Ապետի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04092ER6EYSY, կադ. ծածկագիր՝ 04-020-0011-0006/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Արմավիր բնակավայր, 38-րդ փողոց, 12 հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Ապետի Միքայելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2472-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՒՇԵՂ ԹՈՌՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Մուշեղ Թոռնիկի Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի Այգեշատ բնակավայրում Մուշեղ Թոռնիկի Հովհաննիսյանին ժառանգության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04052SATFVPE, կադ. ծածկագիր՝ 04-010-0008-0002/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Այգեշատ բնակավայր, 10-րդ փողոց, 2հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Թոռնիկի Հովհաննիսյանինորոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2473-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Բուրաստան Վաղարշակի Ղուկասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրում գտնվող՝ Բուրաստան Վաղարշակի Ղուկասյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 04252AR5W5ZB, կադ. ծածկագիր՝ 04-079-0034-0002/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Շենավան բնակավայր, 1-ին փողոց, 18 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բուրաստան Վաղարշակի Ղուկասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2474-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Գուրգենի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրում գտնվող՝ Գագիկ Գուրգենի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 04142ETNDKRH, կադ. ծածկագիր՝ 04-039-0016-0012/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Եղեգնուտ բնակավայր, 3-րդ փողոց, 2 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Գուրգենի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2475-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրի բնակիչ՝ Բուրաստան Վաղարշակի Ղուկասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրի 1-ին փողոց, 18 բնակելի տուն հասցեում գտնվող՝ 0,25 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1972 թվականին կառուցված 104,15 քմ բնակելի տան, 1972 թվականին կառուցված 9,36 քմ բնակելի տան ծածկի, 1972 թվականին կառուցված 6,60 քմ կաթսայատան, 1984 թվականին կառուցված 18,15 քմ անասնաշենքի, 1977 թվականին կառուցված 15,40 քմ մառանի, 1977 թվականին կառուցված 13,60 քմթոնրատան, 1977 թվականին կառուցված 6,0 քմ մատուռի, 1972 թվականին կառուցված 2,10 քմ պարսպի նկատմամբ Բուրաստան Վաղարշակի Ղուկասյանի /ծնված՝ 06.10.1938թ./ սեփականության իրավունքը:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել Բուրաստան Վաղարշակի Ղուկասյանի /ծնված՝ 06.10.1938թ./ սույն որոշման 1-ին

կետում նշված բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. 2007 թվականին կառուցված 18,87քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 2017 թվականին կառուցված 12,60 քմ արտաքին մակերեսով ծածկոցը համարել որպես ինքնակամ կառուցված շինություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բուրաստան Վաղարշակի Ղուկասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2476-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՍԱՆՈՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Ռազմիկի Սանոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում Գուրգեն Ռազմիկի Սանոյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 04192SU3HVHR, կադ. ծածկագիր՝ 04-067-0145-0011/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծամոր համայնք, Մրգաշատ բնակավայր, 11-րդ փողոց, 7-րդ փակուղի, 3 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Ռազմիկի Սանոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2477-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի բնակիչ՝ Գուրգեն Ռազմիկի Սանոյանի կողմից լիազորված անձ ՝ Ռուզաննա Ռոմիկի Սանոյանի դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի 11-րդ փողոց, 7-րդ փակուղի, 3 բնակելի տուն հասցեում գտնվող՝ փաստացի 0,1315 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա՝ 1964 թվականին կառուցված 175,90 քմ բնակելի տան, 1964 թվականին կառուցված 46,10 քմ բնակելի տան բաց պատշգամբի, 1964 թվականին կառուցված 13,50 քմ բնակելի տան նկուղի, 1964 թվականին կառուցված 5,80 քմ աստիճանահարթակի, 1990 թվականին կառուցված 1,90քմ զուգարանի, 1988 թվականին կառուցված 57,10 քմ օժանդակ շինության , 1990 թվականին կառուցված 17,30 քմ օժանդակ շինության, 1997 թվականին կառուցված 5,30 քմ հավաբնի նկատմամբ Գուրգեն Ռազմիկի Սանոյանի / ծնված՝ 21.12.1968թ./ և Սուսաննա Հենրիկի Վասիլյանի /ծնված՝ 25.09.1951թ. սեփականության իրավունքը:

2.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Գուրգեն Ռազմիկի Սանոյանի / ծնված՝ 21.12.1968թ./ և Սուսաննա Հենրիկի Վասիլյանի /ծնված ՝ 25.09.1951թ./սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. 2015 թվականին ինքնակամ կառուցված 8,20 քմ մակերեսով անավարտ օժանդակ շինությունը համարել որպես ինքնակամ կառուցված շինություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Ռազմիկի Սանոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2478-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԾԵՐՈՒՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Ծերունի Գալստյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում Գևորգ Ծերունի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /կադ. ծածկագիր՝ 04-067-0112-0005, 0.12 հա մակերեսով և կադ. ծածկագիր՝ 04-067-0112-0004, 0.12հա մակերեսով, ծածկագիր՝ 04192DDKDDWX/ տրամադրել գույքի միավորումից առաջացող հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Մրգաշատ բնակավայր, 7-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 11-13 հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Ծերունի Գալստյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2479-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՄԱՄԻԿՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Արտակ Մամիկոնի Խաչատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրում Արտակ Մամիկոնի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը / կադ. ծածկագիր՝ 04-031-0032-0009, 0.12 հա մակերեսով և կադ. ծածկագիր՝ 04-031-0032-0010, 0.12հա մակերեսով, ծածկագիր՝ 04112PTJBY75/ տրամադրել գույքի միավորումից առաջացող հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Բամբակաշատ բնակավայր, 7-րդ փողոց, 5-րդ նրբանցք, 18-20 բնակելի տուն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Մամիկոնի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2026 թվականի N 2480-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 2193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 16-ի «Քաղաքացի Սամվել Անդրյուշայի Ենոքյանին սեփականության իրավունքով պատկանող ատամնաբուժարանին գույքի բաժանումից առաջացող հասցե տրամադրելու մասին» N 2193-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

1) Որոշման վերնագրում և 1-ին կետում «ատամնաբուժարան» բառը փոխարինել «բնակելի տուն» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Մեծամոր